Երեքշաբթի
21 մայիսի 2024թ.
№ 9 (618)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՔԱՅԻ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Սյունիքում մեծ ցավով ու ափսոսանքով է ընդունվել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի և ԱԳ նախարարի մահվան գույժը

Իրանի նախագահ Էբրահիմ Ռայիսիի ուղղաթիռի բոլոր ուղևորներն ու անձնակազմի անդամները զոհվել են:

«*Կործանված ուղղաթիռի հայտնաբերման վայրում ողջ մնացած ուղևորների հետքեր չեն հայտնաբերվել»,*– հայտարարվել է IRIB հեռուստաալիքի եթերում:

Բացի նախագահից ուղղաթիռի մեջ էին նաև Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը, Արևելյան Ադրբեջան նահանգի նահանգապետ Մալեք Ռահմատին և Թավրիզ քաղաքի ուրբաթօրյա իմամ Մոհամմադ Ալի Ալե Հաշեմը:

Համաձայն Իրանի սահմանադրության՝ նախագահի մահվան դեպքում նախագահի պարտականությունները ժամանակավորապես կստանձնի երկրի առաջին փոխնախագահը, մինչև ընտրությունների անցկացումը:

Reuters գործակալությունը հաղորդում է, որ առաջին փոխնախագահ Մոհամմադ Մոխբերը, որպես նախագահի պաշտոնակատար, կգլխավորի երեք անձից բաղկացած խորհուրդը, որի կազմի մեջ են մտնում նաև Մեջլիսի (խորհրդարանի) խոսնակը և դատական իշխանության ղեկավարը: Խորհուրդը պետք է կազմակերպի նախագահական նոր ընտրություններ նախագահի մահվանից հետո 50 օրվա ընթացքում:

Հիշեցնենք՝ Իրանի նախագահ Էբրահիմ Ռայիսիի ուղղաթիռը մայիսի 19-ին վայրէջք կատարելիս կործանվել էր Իրանի Արևելյան Ադրբեջանի նահանգում, երբ նա երկրի արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի և այլ պաշտոնյաների հետ վերադառնում էր Իրանի և Ադրբեջանի Հանրապետության սահմանին գտնվող ջրամբարի բացման արարողությունից:

Իրանում համազգային սուգ է հայտարարվել նախագահի մահվան կապակցությամբ:

»

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Զարմանալի՜ թեթև, զարմանալի՜ անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ...
Այդ մենք ենք երևի այն ուղտը հաստակող,
Որ Հիսուսի առակին հակառակ –
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ...
Այդ մենք ենք երևի այն հարուստը,
Որ անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ –
Պիտի ժառանգենք մեր դարերի կորուստը,
Որ բոլոր տկլորներին սահմանված է վերուստ...

Եղիշե Չարենց

Հոգևոր սպասավորները չեն կարող անհաղորդ մնալ ժողովրդի անհանգստություններին. Գերագույն հոգևոր խորհուրդ

Տավուշի մարզից տարածքները Ադրբեջանին միակողմանիորեն հանձնելու իրողության և բանակցություններում ՀՀ իշխանությունների որդեգրած անընդունելի դիրքորոշումների առնչությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը վերահաստատում է նախընթաց արտահայտված իր դիրքորոշումը:

Խիստ վտանգավոր ենք համարում առանց համապարփակ ու երաշխավորված լուծումների Տավուշի սահմանամերձ շրջանում սահմանազատման ու սահմանագծման անվան ներքո իրականացվող գործողությունները, որոնք նոր սպառնալիքներ են առաջացնում մեր ժողովրդի համար: Ստեղծված կացությունն արդարացի ընդվզում է առաջ բերել աշխարհասփյուռ հայության և, մասնավորապես, Տավուշի սահմանամերձ համայնքների բնակիչների շրջանում՝ պատճառ դառնալով «Տավուշը հանուն հայրենիքի» քաղաքացիական շարժման սկզբնավորման:

Առկա գոյաբանական մարտահրավերներին հանդիման հոգևոր սպասավորները, տվյալ դեպքում՝ Տավուշի թեմի եկեղեցականները՝ թեմակալ առաջնորդի գլխավորությամբ,

Շարունակությունը՝ էջ 5

Հանրապետությունում ստեղծված իրավիճակից դուրս գալու ողջամիտ ելքը՝ Աժ արտահերթ ընտրություն և սահմանների ճշգրտման գործընթացի առկախում՝ մինչև տարակուսելի հարցերի պարզեցում

Այս օրերին բոլորիս մտահոգող ներքաղաքական գլխավոր հարցը՝ ո՞րն է ելքը հանրապետությունում ստեղծված վիճակից:

Գործող իշխանությունը հրաժարական չի տա կամ չեն թողնի, որ հրաժարական տա:

Բագրատ սրբազանի առաջարկած իմպիչմենտի գործընթացը հաջողություն չի ունենա:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը (խոսքը, բնականաբար, սահմանադրական ճանապարհի մասին է) Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն է:

Իշխանությունն էլ, կարծում ենք, դրան պիտի ձգտի: Կան իրողություններ, որոնց հետ իշխող քաղաքական թիմն օր առաջ պետք է առերեսվի:

Եթե ՀՀ քաղաքացին Բագրատ սրբազանի առաջնորդած շարժման տիրույթում չէ, ապա դա չի նշանակում, որ Նիկոլ Փաշինյանի հետևորդն է:

Լեգիտիմ, լեգիտիմություն բառերն անընդհատ շրջանառելով՝ իրավիճակը չի խաղաղվում, մարդկանց մտահոգություններն ու առկա խնդիրներն էլ դրանից չեն պակասում:

Ոստիկանական ամբողջ ուժերը ոտքի հանելով անգամ դրությունը չի շտկվում:

Պատերազմի սպառնալիքներով մարդկանց ահաբեկելը նույնպես տպավորություն չի թողնում:

Եվ ուրեմն՝ իշխանությունը պետք է կամենա ճշտել իր և հանրության հարաբերությունները, քանզի երկրի հասարակական–քաղաքական կյանքում ուժերի նոր

հարաբերակցություն է ստեղծված:

Խորհրդարանական ընդդիմության մասին. անհապաղ պետք է վայր դնել մանդատները, որը թեև անմիջապես չի հանգեցնի քաղաքական ճգնաժամի հանգուցալուծման, բայց ավելի հրամայական կդարձնի խորհրդարանական արտահերթ ընտրությունների անցկացումը: Ի վերջո խորհրդարանական ընդդիմությունը վաղուց է ապացուցել, որ ինքը գործոն չէ հանրապետության հասարակական–քաղաքական կյանքում:

Սահմանազատման և սահմանագծման մասին, որը ներկայիս ներքաղաքական լարվա-

Շարունակությունը՝ էջ 3

Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Չաքարյանը հրաժարականի դիմում է ներկայացրել

Համաձայն «Հանրապետություն» կուսակցության և Ազատական կուսակցության Մեղրի խոշորացված համայնքի ընտրված ավագանու անդամների միջև 03.11.2021 թվականին ստորագրված համագործակցության հուշագրի, ես՝ Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Չաքարյանս, այսօր ներկայացում եմ ձեզ ու համայնքին իմ հրաժարականը, և ըստ ընթացակարգի ավագանին պետք է ընտրի համայնքի նոր ղեկավար: Իսկ մինչ այդ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ համայնքի ավագանու տարիքով ավագ անդամը պետք է ավագանու նիստ հրավիրի և վարի: Մեր դեպքում՝ պարոն Խ. Անդրեասյանը:

Մինչև հրաժարականն՝ ուզում եմ հակիրճ ամփոփել իմ պաշտոնավարման ընթացքը: Իմ ընտրվելու օրից սկսած՝ հաղթահարել ենք շատ խոչընդոտներ, անցել ճգնաժամային իրադարձությունների միջով, պատճառների և հիմքերի մասին բոլորս էլ քաջատեղյակ ենք:

Հարգելիներս, Մեղրի համայնքը՝ դիտարկելով որպես ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության, ժողովրդի ազատ կամարտահայտության կարևորագույն ինստիտուտ, բնակչության և իշխանության միջև կապող օղակ, այս տարիներին ավելի ամրապնդեցինք համայնք-բնակիչներ կապը, յուրաքանչյուր բնակչի խնդրին արագ ու սրտացավ արձագանքելով, հնարավոր բոլոր միջոցներով ձեռնամուխ լինելով լուծելու բարձրաձայնված և վերհանված յուրաքանչյուր հարց:

Ես՝ որպես համայնքի ղեկավար, անմնացորդ նվիրումով և մեծ պատասխանատվությամբ եմ կատարել իմ պարտականությունները՝ ի նպաստ մեր համայնքի:

Ուժ և կորով եմ մաղթում բոլորիս, այս բարդ ու դժվարին ժամանակներում ապրելու և արարելու մեծ կամք մեր ծննդավայրում, բարեխիղճ և հետևողական, համատեղ աշխատանքի շնորհիվ շարունակելու ենք հնարավորն անել մեր փոքր համայնքի ու մեծ հայրենիքի խաղաղության ու բարեկեցության համար: Մեղրին Հայաստանի դուռն է, և այդ դուռը միշտ հյուրընկալ է բարեկամների առաջ ու միշտ փակ՝ թշնամիների: Միասին ենք կերտելու մեր կանխատեսելի ու լուսավոր ապագան:

Շնորհակալություն ինձ վստահելու, հավատալու, նվիրվածության և հարգանքի համար:

Մաղթում եմ հաստատակամություն, բարեկեցություն, բեղմնավոր աշխատանք՝ հանուն ավելի բարեկեցիկ հասարակության և ուժեղ համայնքի:

15.05.2024Թ.

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինին

Հարգելի պարոն հյուպատոս

Սյունիքում մեծ ցավով ու ափսոսանքով է ընդունվել գույժն առ այն, որ մայիսի 19-ին, ուղղաթիռի վթարի հետևանքով մահացել են Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռայիսին և Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը:

Մենք ամբողջ գիշեր հետևում էինք լրահոսին՝ հույս փայփայելով, որ նրանց կյանքը կփրկվի, սակայն ավա՜ղ... Նրանք կնքեցին իրենց մահկանացուն:

Ընդունեք «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմի և նրա հետևորդների սրտաբուխ ցավակցությունը:

Հանձին Ձեզ, ցավակցում և համբերություն ու տոկունություն ենք մաղթում Իրանի եղբայրական ժողովրդին:

Նախագահ Էբրահիմ Ռայիսին և նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը կմնան



մեր հուշերում, քանզի բազմիցս ականատես եղանք այն ջերմ զգացմունքներին, որ նրանք տածում էին Հայաստանի ու հայ ժողովրդի և մասնավորապես Սյունիքի հանդեպ:

Մեր հիշողության մեջ է 2022 թվականի հոկտեմբերի 21-ը, երբ ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը ժամանեց Կապան և մասնակից եղավ Իրանի գլխավոր հյուպատոսության բացմանը, ինչը նոր էջ բացեց հայ–իրանական բազմադարյա բարեկամության մեջ:

Երբեք չենք մոռանա երջանկահիշատակ Էբրահիմ Ռայիսիի և Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի անզիջում դիրքորոշումը՝ կապված Սյունիքի անվտանգության և Սյունիքի անտրոհելիության հարցերի շուրջ, երբ խոսք էր գնում մեր երկրամասի տարածքով (հայոց ինքնիշխանությունից դուրս) հաղորդակցության ուղիներ ստեղծելու մասին:

Նորից Ձեզ համբերություն և տոկունություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ի պատասխան ԱԺ պատգամավոր Մարինա Ղազարյանի ելույթների

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Նոյեմբերի 14-ի և ապրիլի 30-ի Ազգային ժողովի հերթական նիստերի ժամանակ՝ Սյունիքի մարզից ընտրված ԱԺ պատգամավոր Մարինա Ղազարյանն արդեն երկրորդ անգամ օգտագործելով երկրի բարձրագույն ամբիոնը, խոսում է Սզնակ և Դիցմայրի գյուղերի ջրամատակարարման խնդրի մասին՝ գաղափար չունենալով և չիմանալով նշյալ խնդիրների լուծմանն ուղղված ոչ քայլերի հաջորդականության, ոչ առավել ևս իրականացված աշխատանքների մասին:

Ուստի, որպես համայնքի ղեկավար, հարկ եմ համարում տեղեկացնել Մարինա Ղազարյանին, որ մենք լիովին տիրապետում ենք թե քաղաքի, և թե 38 գյուղական բնակավայրերի առաջնահերթ լուծում պահանջող բոլոր խնդիրներին և Ձեր կողմից դրանց մասին մեզ հիշեցնելու անհրաժեշտություն բևավ չենք տեսնում: Փոխարենը, խորհուրդ ենք տալիս ԱԺ ամբիոնը պոպուլիստական և իրականությունից կտրված ելույթների համար չօգտագործել և խնդիրը համակողմանի ուսումնասիրելուց և դրանում հավաստիանալուց հետո միայն պատասխանատվության սլաքները ուղղել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ի գիտություն ԱԺ պատգամավորին և մնացած հետաքրքրվող անձանց՝ ստիպված եմ քայլ առ քայլ ներկայացնել խնդրի լուծման իրական պատկերը.

Հաշվի առնելով սահմանամերձ և սահմանամերձ դարձած բնակավայրերի ռազմավարական նշանակությունը, կենսական պայմանների ապահովման անհրաժեշտությունը և գյուղապահպանության խնդիրը՝ դեռևս 2022 թվականին Կապանի համայնքապետարանը նախաձեռնել է Դիցմայրի և Սզնակ գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման և Սյունիք, Դիցմայրի, Սզնակ, Բարգուշատ գյուղերի ոռոգման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման գործընթացը: Նախագծման աշխատանքների ավարտից հետո Կապան համայնքի ավագանին 2023 թվականի նոյեմբերի 22-ի N 123-Ա որոշմամբ համաձայնություն է տվել Համայնքների սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրային հայտերին, այդ թվում՝ վերոնշյալ գյուղերի ոռոգման և խմելու ջրի համակարգերի կառուցման ծրագրերին:

Համայնքապետարանը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված ժամկետներում և կարգով, ավագանու կողմից հավանության արժանացած ծրագրերը ներկայացրել է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ներկայացնելու նպատակով:

Համաձայն վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի՝ ծրագրերը ներկայացվում են միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը՝ մինչև ընթացիկ տարվա փետրվարի 15-ը: Սակայն, մինչ օրս, համայնքապետարանը ծրագրերի վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի եզրակացություն չի ստացել: Այսինքն՝ սահմանված ժամկետները չեն պահպանվել:

Հետևաբար, եթե իսկապես ցանկանում եք համայնքային նշանակության որևէ խնդրի լուծմանն աջակցել, ապա ցուցաբերեք կառուցողական և առարկայական մոտեցում, հակառակ դեպքում ձեր կողմից Ազգային ժողովում մեր խնդիրները բարձրաձայնելու կարիքը մենք բացարձակապես չունենք:

Հ.Գ. Հորդորում ենք՝ այսուհետ պահպանել քայլերի հաջորդականությունը, չկրկնել Սզնակ գյուղի օրինակը և խնդրի մասին տեղեկատվություն ստանալու գրությունները համայնքապետարան ուղարկել նախքան Ազգային Ժողովի ամբիոնից ելույթ ունենալը:

03.05.2024

Մեղրիի համայնքապետարանը դատական հայց է ներկայացրել ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

Մեղրիի համայնքապետարանը (համայնքապետ՝ Բագրատ Չաքարյան) 2024 թ. ապրիլի 11-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (նախարար՝ Գնել Սանոյան)՝ խնդրելով պարտավորեցնել նախարարությանը՝ տրամադրելու Մեղրի համայնքի ղեկավարի 29.02.2024 թ. թիվ Ե-448 գրության պատասխանը:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը և դրան կցված փաստաթղթերը, դատարանը գտել է, որ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ մի քանի պատճառով:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ Մեղրու համայնքապետարանը պատրաստվում է բողոքարկել ՀՀ վարչական դատարանի 2024 թ. ապրիլի 24–ի որոշումը «Հայցադիմումը վերադարձնելու մասին»:

Մեղրու համայնքապետարանի և ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարության միջև ծագած վեճի թեման Մեղրու համայնքապետարանում 2024-ի տարեսկզբին անցկացված ծառայողական քննության արդյունքներն են:

//

Հանրապետությունում ստեղծված իրավիճակից դուրս գալու ողջամիտ ելքը՝ Աժ արտահերթ ընտրություն և սահմանների ճշգրտման գործընթացի առկախում՝ մինչև տարակուսելի հարցերի պարզեցում

Սկիզբը՝ էջ 1

ծության գլխավոր պատճառներից է: Ի դեպ, մարդիկ կողմ են սահմանների ճշգրտման գաղափարին, որի ամբողջական իրականացումը կլինի կարևոր բաղադրիչ՝ տարածաշրջանում կայուն և տևական խաղաղության հասնելու ճանապարհին: Սակայն, բացահայտումը, թե գործընթացը տեղի է ունենում ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի 1976 թ. տեղագրական քարտեզի հիման վրա, չի վերացնում հանրության մեջ առկա տարակույսը: Տեղագրական քարտեզի բացահայտումից հետո մեկ ուրիշ հարց է ծագել՝ արդյո՞ք այդ քարտեզն ավելի բարձր կարգավիճակ ունի (իրավական տեսակետից), քան խորհրդային նախկին երկու հանրապետության՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև 1980-ականների վերջին ստորագրված արձանագրությունները սահմանների վերաբերյալ:

Շատերի կողմից անվերջ թմբկահարվող Ալմա Աթայի հռչակագիրն էլ (խնդրո առարկայի տեսակետից) արհեստականությամբ է պարուրված. կողմերը 1991 թ. դեկտեմբերին ընդամենը պատրաստակամություն են հայտնել ճանաչել և հարգել միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը: Եվ, իհարկե, ոչ մի բառ քարտեզների մասին:

Մեկ ուրիշ հանգամանք էլ. լսելով Ադրբեջան ահաբեկչական երկրի ղեկավարի հերթական հոխորտանքը՝ համոզվում ենք վերստին՝ Տավուշում կատարվող (կամ՝ արդեն իսկ կատարված) սահմանազատումը թշնամական թելադրանքի, շանտաժի արդյունք է, ինչի կրկնությունը ոչ ոք չի կարող բացառել սահմանների ճշգրտման հետագա ընթացքում:

Ուստի և՝ ողջամիտ կլիներ սահմանների ճշգրտման գործընթացի առկախումը՝ մինչև տարակուսելի հարցերի պարզեցում, մինչև թշնամական երկրի կողմից պատերազմի սպառնալիքի և շանտաժի վերացում:

Մայիսի 15-ին ստորագրված համաձայնագիրն էլ, կարծեք, ավելի է խորացրել անհանգստությունը:

Ինչ վերաբերում է հարցին՝ և՛ մայրաքաղաքում, և՛ այստեղ հնչող, թե ինչո՞վ է պայմանավորված Սյունիքին ներկայումս համակած պասիվությունը, ապա դա էլ իր բացատրությունն ունի: Նախ՝ սյունիքյան լռությունը, որին պասիվություն անունն է տրվում, պայմանավորված չէ տեղական որևէ իշխանավորի գործունեությամբ կամ հեղինակությամբ: Ավելին, այն մի քանի իշխանավորները, որ այս օրերին փորձում են իրենց ճակատը ծածկել իրավիճակից քաղած դափնիներով, խղճմտանք են առաջացնում և վերահաստատում իրենց բացակայությունն իրական Սյունիքից:

Իրականությունը հետևյալն է՝ հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ Սյունիքում չկա և չի կարող լինել անտարբերություն: Այլ հարց է, թե դա ինչ դրսևորումներ է ունենում:

Սյունիքը հանրապետական բնույթի միջոցառումները, իրադարձությունները (և՛ իշխանության, և՛ ընդդիմացող ուժերի կողմից կազմակերպվող) նախևառաջ դիտարկում է սյունիքյան խնդիրների ու մտահոգությունների պրիզմայով: Եվ դա Սյունիքի ներկայիս առանձնահատկություններից է՝ պայմանավորված 2020 թ. դեկտեմբերի 18-ից տեղի ունեցող ճակատագրական իրադարձություններով:

Հիմա էլ Իլհամն է ասում՝ Սյունիքից հեռացած ադրբեջանցիները պետք է վերադառնան իրենց «բնօրրան»՝ արևմտյան Զանգեզուր, իսկ Սյունիքի տարածքով միջանցք պիտի լինի՝ Զանգելանն ու Նախիջևանը միմյանց կապող:

Մյուս կողմից՝ Սյունիքում առկա է մեծ անվստահություն քաղաքական բոլոր ուժերի, ճանաչված պետական, հասարակական, քաղաքական դեմքերի հանդեպ. պատճառները բազմաթիվ են, ինչն առանձին խոսակցություն է ենթադրում:

Իսկ ի՞նչ սպասելիքներ ունենք սյունեցիներս այս օրերին, կամ ի՞նչ մտածումներ են համակել մեզ:

Եթե այդ ամենը փորձենք հստակեցնել և ամփոփ ներկայացնել, ապա կստացվի հետևյալը՝ կենտրոնից ակնկալում ենք հստակ և անսակարկելի քաղաքականություն Սյունիքի հանդեպ: Թե չէ ինչ է ստացվում՝ ինչ–որ նախարար 2020-ի դեկտեմբերի 18-ին գալիս է մեր երկրամաս և պահանջում՝ սահմանապահ դիրքերը հետ քաշել, թուրքին ճանապարհ տալ, որ գան ու մեր դիրքերում տեղակայվեն:

Հետո էլ ասում են՝ Սև լիճն ու Իշխանասարը տարվա ընթացքում հիմնականում ձյունածածկ են, մեզ պետք չեն:

Հետո էլ՝ Գորիս–Կապան, Կապան–Ճակատեն, Կապան–Ագարակ ճանապարհները, Շուռնուխի արևելյան հատվածը, Ներքին Հանդի դիմացի սարերը, Տեղի արևելյան դաշտամասերը, Գորայքի ամառային արոտների հյուսիսային հատվածը մերը չեն, Google-ն է ասում:

Հիմա էլ Իլհամն է ասում՝ Սյունիքից հեռացած ադրբեջանցիները պետք է վերադառնան իրենց «բնօրրան»՝ արևմտյան Զանգեզուր, իսկ Սյունիքի տարածքով միջանցք պիտի լինի՝ Զանգելանն ու Նախիջևանը միմյանց կապող:

Այո, երկիրը կառավարող և կառավարելու հավակնություն ունեցող ամեն մի ուժից Սյունիքի հանդեպ հստակ և անսակարկելի քաղաքականություն ենք ակնկալում:

Եվ, իհարկե, երկրի անվտանգային համակարգի ամրապնդում, հայրենատիրական ոգու վերականգնում, Ադրբեջանի կողմից Սյունիքի բռնազավթած տարածքների ազատագրում:

Նաև Արցախի սուբյեկտայնության վերականգնում, Արցախից բռնությամբ տեղահանված մեր հայրենակիցների վերադարձ իրենց պապենական օջախներ՝ անվտանգության ստույգ երաշխիքներով, Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության ազատում ադրբեջանական զնդաններից:

Նաև Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ նորմալ հարաբերությունների հաստատում ու զարգացում:

Տեղի է ունեցել սահմանազատման հանձնաժողովների իններորդ հանդիպումը. ստորագրվել է արձանագրություն

2024թ. մայիսի 15-ին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության սահմանին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի և Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի իններորդ հանդիպումը՝ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և ԱՀ փոխվարչապետ Շահին Մուստաֆաևի նախագահությամբ: Հանդիպման ընթացքում հանձնաժողովները, 2024թ. ապրիլի 19-ի 8-րդ հանդիպման արձանագրության համաձայն, քննարկել են կատարված աշխատանքները և, հաշվի առնելով տեղանքում գեոդեզիական չափումների արդյունքում հստակեցված կոորդինատները, ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի 1976 թվականի տեղագրական քարտեզի համաձայն, որը հերթապահության ընթացակարգ է անցել 1979 թվականին, համաձայնեցրել են անմիջականորեն Բաղանիս (ՀՀ) – Բաղանիս Այրում (ԱՀ), Ոսկեպար (ՀՀ) – Աշաղը Ասկիպարա (ԱՀ), Կիրանց (ՀՀ) – Խեյրումլի (ԱՀ) և Բերքաբեր (ՀՀ) – Կըզըլ Հաջիլի (ԱՀ) բնակավայրերի միջև սահմանագծի առանձին հատվածների համատեղ կազմված Արձանագրություն-նկարագրությունը՝ Խորհրդային Միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող իրավաբանորեն հիմնավորված միջհանրապետական սահմանին համապատասխանեցնելու նպատակով:

Հանդիպման արդյունքում ստորագրվել է Արձանագրություն: Կողմերը պայմանավորվել են աշխատանքային կարգով համաձայնեցնել հաջորդ հանդիպման անցկացման ամսաթիվն ու վայրը:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ալմա Աթայի հռչակագիրը, որը վկայակոչվում է սահմանազատման–սահմանագծման ներկա գործընթացում

Անկախ պետությունները՝ Ադրբեջանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (ՌՍԴԽՀ), Տաջիկստանի Հանրապետությունը, Թուրքմենստանը, Ուզբեկստանի Հանրապետությունը և Ուկրաինան,

- ձգտելով կառուցել ժողովրդավարական, իրավական պետություններ, որոնց միջև հարաբերությունները կզարգանան պետական ինքնիշխանության ու ինքնիշխան հավասարության փոխադարձ ճանաչման և հարգման, ինքնորոշման անքակտելի իրավունքի, միմյանց ներքին գործերին չմիջամտելու և իրավահավասարության սկզբունքների ուժի գործադրումից և ուժով սպառնալիքից, տնտեսական և ճնշման ցանկացած այլ մեթոդից հրաժարվելու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, ներառյալ ազգային փոքրամասնությունների իրավունքները, միջազգային իրավունքի նորմերի ու հանրաճանաչ այլ սկզբունքների ու պարտավորությունների բարեխիղճ կատարման հիման վրա,
- ճանաչելով և հարգելով միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը,
- համարելով, որ բարեկամության պատմական խորը արմատներ ունեցող հարաբերությունների, բարիդրացիական և փոխշահավետ համագործակցության ամրապնդումը համապատասխանում է ժողովուրդների արմատական շահերին և ծառայում խաղաղության և անվտանգության գործին,
- գիտակցելով իր պատասխանատվությունը քաղաքացիական խաղաղության և միջազգային համաձայնության պահպանման համար,
- հավատարիմ լինելով Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրի նպատակներին ու սկզբունքներին,

հայտարարեցին ներքոհիշյալի մասին.

Համագործակցության մասնակիցների փոխգործունեությունն իրականացվելու է իրավահավասարության սկզբունքի, համակարգող ինստիտուտների միջոցով ձևավորված պարիտետային հիմքի վրա և գործող համագործակցության մասնակիցների միջև համաձայնագրերով որոշվող կարգով, որը ոչ պետություն է, ոչ վերպետական կազմավորում:

Միջազգային ռազմավարական կայունության և անվտանգության ապահովման նպատակներով պահպանվելու է միջուկային զենքի նկատմամբ միասնական հսկողությունը և ռազմաստրատեգիական ուժերի միացյալ հրամանատարությունը: Կողմերը կհարգեն ոչ միջուկային և (կամ) չեզոք պետության կարգավիճակի հասնելու միմյանց ձգտումը:

Անկախ Պետությունների Համագործակցությունը բաց է նրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ նախկին ԽՍՀ Միության անդամների, ինչպես նաև Համագործակցության նպատակներն ու սկզբունքները կիսող այլ պետությունների, դրան միանալու համար:

Հաստատվում է կողմնակցությունը ընդհանուր տնտեսական տարածության, համաեվրոպական և եվրասիական շուկաների ձևավորման ու զարգացման համագործակցությանը:

Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծմամբ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը դադարեցնում է իր գոյությունը:

Համագործակցության մասնակից պետությունները երաշխավորում են իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան նախկին ԽՍՀ Միության պայմանագրերից և համաձայնագրերից բխող միջազգային պարտավորությունների կատարումը:

Համագործակցության մասնակից պետությունները պարտավորվում են անվերապահորեն պահպանել սույն Հռչակագրի սկզբունքները:

Հռչակագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 21-ից:

***Հ.Գ.** 1991 թվականի դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում կայացել է նախագահների հանդիպում (ավելի ուշ նման հանդիպումներ տեղի են ունեցել ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստերի տեսքով): Արդյունքում ԱՊՀ-ին՝ բացի Բելառուսից, Ռուսաստանից և Ուկրաինայից, միացել են ևս 8 հանրապետություն, որոնք են՝ Ադրբեջանը (1993 թվականի սեպտեմբերի 24), Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը:*
Վրաստանը ԱՊՀ-ին միացել է 1993 թվականի դեկտեմբերին: Բալթյան երկրները (Լատվիա, Լիտվա և Էստոնիա) հրաժարվել են ստորագրել ինչպես Ալմա Աթայի, այնպես էլ Բելովեժյան համաձայնագիրը:
Իրավաբանորեն ստորագրվել է՝ հակասելով «ԽՍՀՄ օրենք 03.04.1990 № 1409-I»-ի և ԽՍՀՄ պահպանման մասին համամիութենական հանրաքվեի արդյունքներին //

ՀՀ և Ադրբեջանի միջև ոչ թե նոր սահման է ստեղծվում, այլ վերարտադրվում է ԽՍՀՄ փլուզման պահին դե յուրե գոյություն ունեցած սահմանը. վարչապետի աշխատակազմ

Վարչապետի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը պատասխանել է սահմանազատման հարցերով Հայաստանի և Ադրբեջանի հանձնաժողովների մայիսի 15-ին հրապարակված հայտարարության մասին «Արմենպրես»-ի հարցերին: Հարցուպատասխանը ներկայացնում ենք ստորև:

Հարց – *Հայաստանի և Ադրբեջանի սահմանազատման հարցերով հանձնաժողովները համատեղ հաղորդագրություն են տարածել, որում ասվում է, որ Հայաստանի Բաղանիս, Ադրբեջանի Բաղանիս-Այրում, Հայաստանի Ոսկեպար, Ադրբեջանի Աշաղը Ասկիպարա, Հայաստանի Կիրանց, Ադրբեջանի Խեյրեմլի, Հայաստանի Բերքաբեր, Ադրբեջանի Կըզըլ Հաջիլի գյուղերի հատվածներում սահմանի նկարագրություն-արձանագրություններ համաձայնեցվել են ԽՍՀՄ Զինված ուժերի Գլխավոր շտաբի 1976 թվականի իրավական հիմք ունեցող տոպոգրաֆիական քարտեզների հիման վրա: Ի՞նչ է սա նշանակում:*

Պատասխան – Արդեն տեղյակ եք, որ նշված հատվածներում համապատասխան աշխատանքային խմբերի կողմից տեղադրվել են սահմանային սյուներ՝ նախապես համաձայնեցված կոորդինատները տեղորոշելու համար: Այդ կոորդինատները վերցված են 1976 թվականի, վերը հիշատակված քարտեզներից: Հիմա արդեն քարտեզագիրները համաձայնեցրել են սյուների միջև սահմանների անցման գծերը, կրկին նույն քարտեզների հիման վրա: Այսինքն՝ այս հատվածներում սահմանային գծի վերարտադրումը ավարտվել է, համաձայնեցվել, ստորագրվել և այդ հատվածներում սահմանը համարվում է դելիմիտացված:

Հարց – *Իսկ ինչո՞ւ են ընտրվել 1976 թվականի քարտեզները, որոնք, ինչպես նշված է սահմանազատման հանձնաժողովների մամուլի հաղորդագրության մեջ, օգտագործվել են ԽՍՀՄ Զինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից:*

Պատասխան – Դա, ըստ էության, Խորհրդային Միության փլուզման պահին դե յուրե իրավական հիմք ունեցող քարտեզն է: ՀՀ կառավարության համար սկզբունքային է եղել մոտեցումը, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ոչ թե նոր սահման է ստեղծվում, այլ վերարտադրվում է ԽՍՀՄ փլուզման պահին դե յուրե գոյություն ունեցած սահմանը:

Հարց – *Հանձնաժողովների հաղորդագրության մեջ նշվում է, որ այդ քարտեզները հերթապահության ընթացակարգ են անցել 1979 թվականին: Ի՞նչ է դա նշանակում և ինչո՞ւ չեն վերցվել, ասենք, 1990 թվականի քարտեզները:*

Պատասխան – Այդ ձևակերպումն իրավական տերմինաբանություն է, ինչը նշանակում է, որ քարտեզագրության և գեոդեզիայի ոլորտում ԽՍՀՄ լիազոր մարմինը 1979 թվականին ստուգել է քարտեզի ճշտությունը և իրավական հիմքերը: Այդ քարտեզներն օգտագործվել են մինչև Խորհրդային Միության փլուզման պահը: Այսինքն, դրանք ԽՍՀՄ իրավասու պետական մարմինների կողմից վերստուգված ամենավերջին քարտեզներն են:

Հարց – *Տավուշի մարզի Կիրանց գյուղում սահմանային ոչ բոլոր սյուներն են տեղադրվել: Այդ հարցը ինչպե՞ս է լուծվելու: Եվ ընդհանրապես Կիրանցի հատվածում հարցերն ինչպե՞ս են լուծվում. նոր ճանապարհ կառուցելու, տներ օտարելու հարց ծագելո՞ւ է:*

Պատասխան – Կիրանցի երեք կոորդինատները տեղորոշվել են համակարգչային եղանակով, և սյուները կտեղադրվեն ավելի ուշ: Մյուսները տեղադրված են: Կիրանցի համար նպաստավոր լուրը մասնավորապես այն է, որ մոտ 25 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որոնք վերջին 33 տարում անհասանելի են եղել Կիրանցի համար, կվերադարձվեն գյուղին: Սահմանի նկարագրությունն այնպիսին է, ինչպիսին կա 1976 թվականի քարտեզով: Ինչպես ասվել է, ճանապարհի տեղափոխման խնդիր, այո, առաջանալու է, որը հնարավոր է իրականացնել 2-3 ամսում: Կհիմանորոգվի նաև Հ-26 ավտոճանապարհից դեպի Աճարկուտ, ապա Կիրանց տանող ճանապարհը, որն այլընտրանքային է Կիրանցի համար: Ինչ վերաբերում է գույքային հարցերին, դրանց ծավալը մեծ չի լինի, և կառավարությունը բոլոր նման դեպքերում կփոխհատուցի քաղաքացիների կրած վնասները, ըստ նրանց նախընտրության գույքային կամ ֆինանսական եղանակով: Կառավարության ներկայացուցիչները առավոտից արդեն կգույքագրեն հնարավոր խնդիրները և կսկսեն քննարկումները Կիրանցի բնակիչների հետ:

Հարց - *Ինչպե՞ս եք գնահատում սահմանազատման արդյունքները Բաղանիսի, Ոսկեպարի և Բերքաբերի հատվածներում:*

Պատասխան - Ոսկեպար-Բաղանիս հատվածի ամենազգայուն հարցերից մեկը կապված էր Ոսկեպարի Սբ Աստվածածին եկեղեցու, մյուսը՝ Ոսկեպար-Բաղանիս ԽՍՀՄ ժամանակների ճանապարհի հետ: Երկու հարցն էլ լուծվել են լավագույն ձևով: Ճանապարհն ամբողջությամբ ՀՀ տարածքում է, եկեղեցին նույնպես, և սահմանագիծը գտնվում է թե ճանապարհից, թե եկեղեցուց բավականին հեռու: Բերքաբերում ոչ մի զգայուն իրավիճակ չկար և չկա:

Հարց – *Իսկ ե՞րբ են երկու կողմերի սահմանապահները կանգնելու համաձայնեցված սահմանի վրա:*

Պատասխան – Դա տեղի կունենա առաջիկա 8-9 օրվա ընթացքում, իսկ Կիրանցի առավել զգայուն հատվածում՝ ավելի ուշ, որովհետև այդտեղ որոշ մանրամասներ ենթակա են լրացուցիչ ճշգրտման:

Հարց – *Կարծիք կա, թե սահմանազատման ընթացիկ գործընթացը միակողմանի զիջում է Հայաստանի Հանրապետության կողմից, և սրվելու են անվտանգային սպառնալիքները Բաղանիս, Ոսկեպար, Կիրանց, Բերքաբեր գյուղերի համար:*

Պատասխան – Դելիմիտացված սահման ունենալը չի կարող երկրի կամ որևէ բնակավայրի անվտանգության սպառնալիք դառնալ: Ընդհակառակը, նման սահմանագիծը չեզոքացնում է սպառնալիքը: Ինչ վերաբերում է զիջմանը, սահմանի վերարտադրությունն Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա չի կարող զիջում համարվել, որովհետև վերարտադրվում է այն սահմանը, որը մենք ունենք, որը մեր միջազգայնորեն ճանաչված սահմանագիծն է: Պրոցեսը պետք է շարունակվի նույն տրամաբանությամբ և սկզբունքներով սահմանի մնացած հատվածներում ևս:

15.05.2024

Ի՞նչ քարտեզներ են դրվել դելիմիտացիայի հիմքում

Սահմանային ճշգրտումների վերաբերյալ մայիսի 15-ին Հայաստանի ու Ադրբեջանի միջև ստորագրված արձանագրությունները շարունակում են մտահոգել հանրությանը:

Ըստ Տիգրան Աբրահամյանի՝ «...Դելիմիտացիայի գործընթացն արվել է տեղային, Ադրբեջանի ճնշմամբ ու դեռ պարզ չէ, թե որն է կողմերի պատկերացումն ամբողջական սահմանի ճշգրտումների վերաբերյալ:

Առանց սահմանների ամբողջական դելիմիտացիայի այս ուղղությամբ ցանկացած քայլ անընդունելի է:

Ըստ ՀՀ օրենսդրության և 2010 թվականի համապատասխան օրենքի նկարագրության՝ Ադրբեջանին հանձնվող տարածքները կամ նվազագույնը դրանց մի մասը ՀՀ տարածքային ամբողջականության մաս են կազմում, ինչը նշանակում է, որ առանց հանրաքվեի այդ տարածքների հանձնում չի կարող լինել:

Ինչ վերաբերվում է քարտեզներին, իշխանությունը մինչև այս պահը լրիվ այլ քարտեզների մասին էր խոսում, իսկ հիմա որպես դելիմիտացիայի հիմք վերցրել է այլ քարտեզ:

Եթե իշխանությունը հայտնում է, որ դա իրավաբական ուժի առումով ամենաբարձր կարգավիճակն ունի, ապա դա, մեղմ ասած, այնքան էլ այդպես չէ:

Սովետական շրջանում սահմանների որոշման իրավասությունները տրված է եղել ԽՍՀՄ-ի կազմի մեջ գտնվող հանրապետություններին, այլ ոչ թե միութենական մարմիններին, ըստ այդմ՝ ԽՍՀՄ ԳՇ քարտեզները չեն կարող առավել բարձր կարգավիճակ ունենալ, քան սովետական Հայաստանի ու Ադրբեջանի միջև կայացած դելիմիտացիայի/դեմարկացիայի արձանագրությունները:

Դեռ չեմ խոսում այն մասին, որ տարածքների հանձնման հարցում շտապողականություն դրսևորող ՀՀ իշխանությունը պետք է դեմարկացիայի շրջանակներում առաջ մղի կենսական անհրաժեշտություն համարվող տարածքների՝ ՀՀ կազմում պահելու հարցը՝ փոխանակումների միջոցով, որն ամբողջության համապատասխանում է միջազգային պրակտիկային, նախադեպերին և որպես գործընթաց՝ դեմարկացիայի տրամաբանությանը»: //

Հոգևոր սպասավորները չեն կարող անհաղորդ մնալ ժողովրդի անհանգստություններին. Գերագույն հոգևոր խորհուրդ

Սկիզբը՝ էջ 1

հավատարիմ իրենց հոգևոր առաքելությանն ու կոչմանը, չեն կարող անտարբեր մնալ ու անհաղորդ՝ իրենց խնամքին հանձնված ժողովրդի անհանգստություններին ու կարիքներին:

Մեր ժողովրդի զավակներին հորդորում ենք արդար մտահոգություններն ու անհանգստություններն արտահայտել բացառաբար խաղաղ ճանապարհներով և դրսևորել հանդարտություն ու զսպվածություն՝ զերծ մնալով հակաօրինական գործողություններից: Հասարակական կարգի պահպանության համար պատասխանատու ծառայություններից ակնկալում ենք բացառապես օրենսդրությանը խիստ համապատասխան գործելառճ:

Կոչ ենք անում նաև իշխանություններին՝ անսալ ժողովրդի հիմնավոր պահանջներին և խաղաղությանն ուղղված գործընթացներում առաջնորդվել այնպիսի մոտեցումներով, որոնք չեն մեծացնի անվտանգային սպառնալիքները՝ խորացնելով մեր հանրության մեջ անպաշտպանվածության և անորոշության զգացումները: Կարևորելով սահմանազատման ու սահմանագծման գործընթացները՝ միաժամանակ հաստատում ենք, որ այդ աշխատանքները պետք է իրականացվեն պատերազմի բացառման, Հայաստանից բռնազավթված տարածքների վերադարձման և բնակավայրերի անվտանգ ու անխաթար կյանքի ապահովման երաշխիքների առկայության պայմաններում:

Ազգային մեր արժանապատվությունը, հայրենի պետության և սրբազան արժեքների հանդեպ նախանձախնդրությունն ու հավատարմությունը պետք չէ տեղի տան անհուսության, անհանդուրժողության և երկչոտության, թշնամանքի և ատելության առջև:

Եկեղեցին, չունենալով քաղաքական իշխանության հավակնություններ, պիտի շարունակի պատմական պատասխանատվության գիտակցությամբ ջանքեր ներդնել հանուն հայրենիքի և պետականության զորացման, մեր ժողովրդի ինքնության ու իրավունքների պաշտպանության, ազգային կյանքում միասնականության ու եղբայրասիրության ամրապնդման՝ նպաստելով տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը:

Մեր աղոթքն է, որ Երկնավոր Տերը խաղաղության մեջ պահի մեր երկիրը և մեր ժողովրդի կյանքից ներս զորացնի սիրո, համերաշխության ու միաբանության ոգին: Ամեն:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, 07.05.2024

Ռուսական զինվորական կետերը դադարեցնում են իրենց գործունեությունը նաև Սյունիքում

2020 թ. աշնանը հայկական կողմի խնդրանքով Ռուսաստանի Դաշնության սահմանապահների ժամանակավոր օպերատիվ խմբերը տեղակայվեցին հայ-ադրբեջանական սահմանի մի շարք կետերում, այդ թվում՝ Սյունիքի մարզում:

Սակայն փոփոխված պայմաններում ռուս զինվորականների ու սահմանապահների գործունեությունը մեր սահմաններում այլևս աննպատակահարմար է գտնվել: Հայաստանի այդ խնդրանքին համաձայնություն է տվել ռուսական կողմը. այդ մասին հայտնի է դարձել Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների մայիսի 8-ի հանդիպումից հետո:

Հայկական կողմի խնդրանքով ռուս սահմանապահները դուրս կգան նաև «Զվարթնոց» օդանավակայանից:

Միևնույն ժամանակ ռուս սահմանապահները կմնան հայ-իրանական և հայ-թուրքական սահմանին:

Սյունիքում ռուսական զինվորական կետերի գործունեության դադարեցումն այս օրերին մարզում քննարկվող հարցերից է:

Ոմանք տեղի ունեցողը ողջունում են, ոմանք էլ մտահոգություն հայտնում: Մասնավորապես՝ արդյո՞ք սահմանի այդ հատվածներում՝ անվտանգության տեսակետից, վակուում է ստեղծվում: Կամ՝ արդյո՞ք սահմանի այդ կետերում արդեն իսկ հերթապահում են հայկական ուժերը:

Բանն այն է, որ 44-օրյա պատերազմից հետո ռուս սահմանապահներն ու զինվորները պատշաճորեն չեն լուծել իրենց առջև դրված խնդիրներն Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների ընթացքում: Եվ, այդուհանդերձ, ՌԴ դրոշը և ռուս զինվորականությունը որոշակիորեն զսպող գործոն են եղել ադրբեջանցի ելուզակների ճանապարհին, ինչը չի կարելի չխոստովանել:

Եվ հիմա՝ ստեղծվող իրավիճակում, մեր կողմից ձեռնարկվող քայլերի մասին սյունեցիներս կուզենայինք գոնե համառոտ տեղեկատվություն ստանալ հանրապետության պաշտպանական գերատեսչությունից: //

Հայաստանի և Իրանի միջև քննարկվել է Արաքս գետի վրա երկրորդ կամրջի կառուցման հարցը

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրեն Գոռ Ավետիսյանն Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարարության պաշտոնյաների հետ քննարկել է Հայաստանի և Իրանի միջև՝ Արաքս գետի վրա երկրորդ կամրջի կառուցմանն առնչվող հարցեր: Այդ մասին հայտնում են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից:

«Հայաստանի և Իրանի ներկայացուցիչները հանդիպման ընթացքում քննարկել են կամրջի կառուցման ծրագիրը մշակելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու հարցը: Հայկական կողմն ուղարկել է հայ մասնագետների առաջարկվող ցանկը՝ աշխատանքային խմբում ներգրավելու համար: Ստեղծվելիք աշխատանքային խումբը կքննարկի և կմշակի կամրջի կառուցման կոնցեպտը», – ասված է հաղորդագրությունում:

Հիմնադրամից նշում են, որ նոր կամրջի կառուցման անհրաժեշտությունն առաջացել է սահմանը հատող մեքենաների թվի աճի, փոխադրումների ավելացման արդյունքում:

«Իրանի մասնագետների կողմից Մեղրիի սահմանային անցակետում ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալների վերաբերյալ իրականացված վերջին հետազոտության համաձայն՝ 2023-ի չորրորդ եռամսյակում տրանսպորտային միջոցների ընդհանուր թիվը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, զգալիորեն աճել է: Հաշվի առնելով Հայաստան-Իրան սահմանը հատող մեքենաների թվի աճը, ինչպես նաև Ագարակ-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման և արդիականացման արդյունքում ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների կանխատեսվող աճի արագ տեմպերը՝ առաջացել է Հայաստանի և Իրանի միջև երկրորդ կամրջի կառուցման անհրաժեշտություն», – ասված է հաղորդագրությունում:

Իրանի և Հայաստանի միջև առաջին կամրջային անցումն Արաքս գետի վրայով շահագործման է հանձնվել 1996-ին: Գործող կամրջի երկարությունը 192 մ է:

* * *

Հայ-իրանական սահմանին նոր կամուրջ կառուցելու մասին նախորդ տարվա հոկտեմբերին Երևանում խոսել էր Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարար Մեհրդադ Բազրփաշը: Նրա կարծիքով՝ Հայաստանի ու Իրանի միջև գործող կամուրջն արդեն բավարար չէ ապահովելու աճող ապրանքաշրջանառության ծավալները: Իրանցի նախարարը նշել էր, որ հայկական կողմի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ այդ առիթով աշխատանքային խումբ ձևավորելու համար:

Հայաստանն իրանական ընկերությունների հետ 2023-ի հոկտեմբերի 23-ին ստորագրել էր «Հյուսիս-հարավի» Ագարակ-Քաջարան 32 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարության պայմանագիրը: Տրանշ 4-ի՝ Քաջարան-Ագարակ վերակառուցման գործող ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ՝ Ագարակ (Իրանի սահման)-Վարդանիձոր-նախատեսվող Քաջարանի թունելի ելք հատվածը: Նախատեսվում է կառուցել թվով 5 նոր փոխհատում, 6 նոր էստակադա, 920 մետր ընդհանուր երկարությամբ 2 նոր թունել և 17 նոր կամուրջ: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել երեք տարվա ընթացքում: //

Ադրբեջանը հիմնահատակ ավերել է Բերձորի եկեղեցին

Դամացանցում տարածվել է արբանյակային լուսանկար, որտեղ հստակ երևում է, որ Ադրբեջանը հիմնովին ավերել է Բերձորի Սբ Համբարձման եկեղեցին: Վանդալիզմի այս հերթական դրսևորումը սովորական երևույթ է այդ պետության համար, որի գերիխնդիրներից մեկն է՝ ոչնչացնել հայկական հետքը բռնազավթված տարածքներում:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը, խստորեն դատապարտելով Ադրբեջան պետության կողմից վանդալիզմի հերթական գործողությունը, ընդգծում է, որ կատարվածը մշակութային ցեղասպանություն է, որը բնորոշվում է հետևյալ կերպ. էթնո-կրոնական կամ կրոնական խմբի մշակութային արժեքների կանխամտածված անտեսում կամ ոչնչացում, որը ցեղասպանության հետ ասոցացվող գործողություններից է: Նպատակն է՝ ապացուցել, որ այդ խումբը երբևէ չի ապրել տվյալ տարածքում և չի ունեցել մշակութային ներկայություն:

Հիշեցնենք, որ դեռևս 2022 թվականին Ադրբեջանի Հուշարձանների պահպանության հասարակական կազմակերպությունը հայտարարություն էր տարածել, որ նախաձեռնում են Բերձորի Սբ Համբարձման եկեղեցին վերածել մզկիթի: Կարևոր է փաստել, որ Ադրբեջանի պետական քաղաքականությունը՝ ի դեմս Ալիևի և իր ստեղծած բռնապետական ռեժիմի, բացահայտ հայտարարություն է տարածել, որ շարունակելու է վերջին երեսուն տարիների ընթացքում հայերի ստեղծած ժառանգությունը ոչնչացնել: Դրա ամենավառ օրինակն էր 2021 թվականի մարտի 25-ին BBC լրատվականի կողմից տարածված լուսանկարը, որտեղ երևում է հիմնահատակ ավերված Մեխակավանի Սբ Աստվածածին եկեղեցին (կառուցված 2013 թվականին):

Այսպես, քաղաքակիրթ աշխարհի լուռ համաձայնությամբ քայլ առ քայլ Արցախի տարածքում ոչնչացվում է հայկական մշակութային հետքը: Իսկ որ Ադրբեջանն ավարտին կհասցնի իր ծրագրած մշակութային ցեղասպանությունը, կասկած չի հարուցում: Վկա է Նախիջևանում և Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող այլ տարածքներում տեղի ունեցածը: //

Կապանյան բեմահարթակում հանրահայտ վիրտուոզ ջութակահարն էր

ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆ. «Հաճելի զգացողություններով եմ հեռանում Կապանից»

Հարցազրույց ջութակահար Սերգեյ Խաչատրյանի հետ

– Հարգելի պարոն Խաչատրյան, ինչպես տեղեկանում ենք Ձեր ֆեյսբուքյան էջից, համերգային հագեցած գրաֆիկ ունեք, տարվա ընթացքում մեկ-երկու անգամ եք լինում Հայաստանում: Հաճելի է, որ այս անգամվա Ձեր համերգային շրջագայությունը ներառում է Սյունիքը: Երեկ հանդես եկաք Մեղրիում, այսօր էլ կապանցի երաժշտասերը վայելեց Ձեր կատարումների արվեստը:

– Եթե ցանկությունը մեծ է, ուրեմն ամեն ինչ ստացվում է: Դեռևս անցած տարվա սեպտեմբերին պիտի լիներ այս համերգը, բայց Ադրբեջանի հերթական հարձակումի պատճառով չեղարկվեց: Ինչևէ, ուրախ եմ, որ այստեղ եմ, առաջին անգամ եմ Կապանում: Երեկ նույն ծրագրով հանդես եկանք Մեղրիում, վաղը կլինենք Գորիսում: Իհարկե, բոլորը խոսում են Սյունիքի՝ որպես Հայաստանի համար ողնաշար լինելու մասին, բայց ասեմ ավելին, այն մի այլ Հայաստան է: Այստեղ բնակվող մարդիկ ուրիշ հոգեբանություն ունեն և այլ կերպ են մտածում: Իմ ամենասիրած վանքերից մեկը Տաթևն է, երբ գալիս եմ Հայաստան, ձգտում եմ լինել Տաթևում: Ուրախ եմ կրկնակի, որ հաջողվեց լինել այստեղ, ներկայացնել իմ արվեստը սյունեցի ունկնդրին: Հուսով եմ՝ սա մի անգամվա բնույթ չի կրի, այլ շարունակական կլինի: Հայ երաժիշտներս մարզերում հանդես գալու, բարձր արվեստ տարածելու առաքելությունը պիտի վերցնենք մեզ վրա: Ցավոք, այդ մտահղացումն ուշ արթնացավ իմ մեջ, բայց հույս ունեմ, որ մյուս անգամ, երբ գամ Հայաստան, կձգտեմ, որ այցս չսահմանափակվի միայն Երևանով:

– Տեղեկացանք նաև, որ Դուք նվագում եք ջութակագործ մեծ վարպետների պատրաստած գործիքներով, օրինակ Ստրադիվարիուսի: Ի՞նչ գործիքով հնչեցրիք այսօրվա խաչատրյանական ստեղծագործությունների կատարումները:

– Այս անգամ եկել եմ իտալացի վարպետի՝ 1709թ. պատրաստած ջութակով, որը Կրեմոնայի ջութակագործների վերջին աշխատանքներից է:

– Անցած տարի՝ ամռանը Կապանում անցկացվեց միջազգային երաժշտական փառատոն՝ դարձյալ արտասահմանում ճանաչում ունեցող երաժիշտների մասնակցությամբ: Նախատեսվում է այս ամռանը ևս անցկացնել: Հնարավո՞ր է Ձեր մասնակցությունը: Նման բան անցե՞լ է Ձեր մտքով:

– Այս տարի դժվար թե նորից կարողանամ հայրենիք գալ, բայց մյուս տարի, ինչու՝ ոչ: Կարևորն այստեղ նվագելն է, ինչպես արդեն նշեցի, երաժշտական կյանքը մեր մարզերում ակտիվացնելը: Եվ շատ լավ է, որ նման փառատոներ կան, ու երաժիշտներ կան, որ մտածում են երաժշտական կյանքն աշխուժացնելու մասին: Ես էլ իմ կողմից կփորձեմ անել հնարավորը:

– Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանում ջութակահարների դպրոցը, այսպես ասած «շկոլան»:

– Ժամանակին ունեցել ենք ջութակահարների շատ հզոր դպրոց, որ ռուսական դպրոցի հետ համաքայլ է եղել: Ցավոք սրտի, այսօր մի բաց կա, որ պիտի լրացվի, այսօր դեռևս կան նշանավոր դասավանդողներ, խորհրդային դպրոցի ներկայացուցիչներ են, բայց այդ սերունդը, երբ չկարողանա դասավանդել, կառաջանա նշածս բացը, որը լրացնելու խնդիր կառաջանա: Իմ համախոհներով խոսել ենք այդ մասին, բայց երբ մենակատարի ակտիվ կյանքով ես ապրում, դժվար է այն իրականացնել, ինչպես ես կուզենայի: Որովհետև այն ամենը, ինչ ստացել եմ իմ դասատուից՝ Ժոզեֆ Ռիսինից, ով ինձ 1996 թվականից դասավանդում էր Գերմանիայի Կարլսռուհե քաղաքի երաժշտական բարձրագույն դպրոցում, թե ինչպես տիրապետել այդ գործիքին, ժամանակ է անհրաժեշտ փոխանցել ուրիշներին, ինչը չի բավականացնում:

– Այնուամենայնիվ, ի՞նչ եք զգում Հայաստանում համերգով հանդես գալիս:

– Ասեմ, որ ամեն ինչից զատ դա ունի ռազմաքաղաքական նշանակություն: Այն համոզմունքն ունեմ, որ առանց մշակույթի երկար չենք կարող գոյատևել, որովհետև, ցավոք սրտի, արենայում կան տարբեր քաղաքական գործիչների տեսլականներ, ովքեր ընդհանրապես մշակույթը չեն կարևորում և կարծում են, որ ամեն ինչը կարելի է մոռանալ, և ամենը սկսել սպիտակ թղթից: Կարծում եմ՝ այն մշակույթը, որ ժառանգել ենք դարերից, պիտի շարունակել: Եթե այդ ժառանգությանը որևէ բան չավելացնենք, որպես ազգ ապագա չենք կարող ունենալ: Շատ կարևոր է, որ այդ մշակութային կյանքը նաև մարզերում ակտիվացվի, որքանով որ հնարավոր է:

– Դո՞ւր եկավ Ձեզ կապանցի հանդիսատեսը:

– Ինձ համար գրավիչն այն էր, որ շատ կլանված լսում էին: Կարծում եմ՝ հետաքրքրություն կա դասական երաժշտության հանդեպ: Մտածում էինք՝ դահլիճը լեցուն կլինի՞, թե՞ ոչ: Բայց հաճելի էր տեսնել դահլիճը լեփ-լեցուն և դասական երաժշտությունը գնահատող հանդիսական: Գիտեմ, որ Կապանը երաժշտական ավանդույթներ ունեցող քաղաք է, այստեղ երաժշտական կրթությունը հարգի էր, ծանոթ եմ կապանցի երաժիշտների հետ: Հաճելի զգացողություններով եմ հեռանում Կապանից:

ՁՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Մարզային համերգային շրջագայության շրջանակում (Գյումրի, Մեղրի, Կապան, Գորիս) մայիսի 16-ին հայտնի վիրտուոզ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ (դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) հանդես եկավ Կապանի մշակույթի կենտրոնի մեծ համերգասրահում: Հնչեց Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը, հատվածներ «Սպարտակ» բալետից և «Դիմակահանդես» դրամայի համար գրված երաժշտությունից: Հանդիսականը ջերմ ծափողջույններով ընդունեց նվագախմբի և ջութակահարի կատարումները: Համերգի ավարտից հետո դիրիժոր Էդուարդ Թոփչյանը «Այունյաց երկրին» փոխանցեց, որ համերգը նվիրված էր Արամ Խաչատրյանի ծննդյան 125-ամյակին և բնականաբար անցյալ տարի պետք է տեղի ունենար, բայց ռազմաքաղաքական իրադարձությունների պատճառով տեղափոխվեց այս գարուն:

Նվագախմբի ջութակահարուհի Անի Ղազարյանը տպավորված էր կապանցի հանդիսականի պահվածքից. *«Շատ ուշադիր հանդիսատես էր: Հեռախոսների ձայներ չլսվեցին, այն, ինչ սովորաբար լինում է համերգների ժամանակ՝ որպես խանգարող հանգամանք: Նկատեցի, որ մարդիկ ոգևորությամբ են մտնում դահլիճ, և համերգի ավարտին նրանց ծափողջույններն ու վերաբերմունքն անկեղծ էին: Ասեմ, որ նվագախմբի շատ անդամներ առաջին անգամ էին Սյունիքում և շատ-շատ տպավորված են»:*

Համերգի ավարտին երիտասարդ երաժշտասերներն երկար ժամանակ բաց չէին թողնում ճանաչված ջութակահարին, ինքնագիր էին խնդրում, հարցեր ուղղում նրան:

Ինը տարեկանում Սերգեյ Խաչատրյանն առաջին անգամ հանդես է եկել որպես մենակատար սիմֆոնիկ նվագախմբի հետ: 15 տարեկանում դարձել է Հելսինկիի Սիբելիուսի անվան մրցույթի ամենաերիտասարդ մասնակիցն ու հաղթողը՝ ստանալով «Կոնցերտի լավագույն կատարում» մրցանակը: Սիմֆոնիկ նվագախմբերի հետ հանդես է եկել աշխարհի շուրջ 50 երկրում, այդ թվում, որպես կանոն տարեկան մեկ-երկու անգամ համերգով հանդես է գալիս Հայաստանում: Պարբերաբար հայրենիքում մասնակցում է «Վերադարձ» խորագրով փառատոնին, հանդես է գալիս հայրենիքում այլ հայազգի երաժիշտների հետ: Սերգեյ Խաչատրյանը 2013 թվականին ստացել է շվեյցարական «Credit Swiss» բանկի ամենամյա մրցանակը՝ որպես «Աշխարհի լավագույն երիտասարդ երաժիշտ»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԻՄ ՍԵՎԱԿԸ

Հատվածներ Գագիկ Դավթյանի խոհագրությունից

Գագիկ Դավթյանը դպրոցական տարիներից ի վեր բարեբախտություն է ունեցել արժանանալու մեծ բանաստեղծի ուշադրությանը և գնահատանքին, այլև վայելելու նրա ջերմ մտերմությունը երկրային կյանքի վերջին յոթ տարիներին:

Իբրև սկիզբ

Բանաստեղծի եղերական վախճանով սկսված երկնային կյանքը, որ վերջ չի ունենալու այլևս, եկավ խմբագրելու և ճշգրտումներ մտցնելու

վերջի և սկզբի,
բացակայի և ներկայի,
անցավորի և հավերժականի մասին

մեր ավանդական պատկերացումների մեջ:

Չիմացանք էլ, թե ինչպես անցան տարիները:

Չիմացանք, որովհետև այսօր էլ նա մեզ հետ է առավել, քան մեր կողքին ապրող ու ստեղծագործող շատերը: Եվ, իհարկե, մեր կողքին էր նաև երեկ,

երբ

«մեր հողի վրա,
մեր երկնքի տակ
մենք դարձել էինք օտարի գաղութ»,

երբ

«հավասարության ու եղբայրության ազնիվ քարոզով
ուրիշի տուն ու երկիր էր մտնում
օտար վարք ու բարք,
օտար ծես ու կարգ»...

1988-ի փետրվարին նույնպես մեր կողքին էր նա: Ավելին, նա մեր ազգային Զարթոնքը նախապատրաստած առաջիններից էր:

Մեր Զարթոնքի ճանապարհին անցնում է այն Տաճարի միջով, որի

և՛ Ճարտարապետը,
և՛ Որմնադիրը,
և՛ Սպասավորը,
և՛ Քարոզիչը
և մոլեգին Զանգահարն էր նա,
և է այսօր,
և լինելու է հավիտյանս:

Նախքան մեր հանդիպումը

Ինչպես իմ սերնդակիցները, ես կրթվել եմ խորհրդային դպրոցում: Այն դպրոցում, որն, օրինակ, Տերյանի կենսագրության ամենանշանակալի փաստը համարում էր այն, որ նա աշխատել է Լենինի կողքին, և դա «հսկայական ազդեցություն է ունեցել նրա ստեղծագործության վրա» (մեղմ, մեղմ):

Գրականության այն դասագրքերը, որոնցով մեզ գրական ճաշակ էր «պատվաստվում», լեցուն էին ձոներով, ներբողներով, ինչպես, օրինակ, նույն Տերյանի «Սիրտդ որպես վառ ատրուշան, պահիր վառ» գազելը, որ ներկայացվում էր որպես գլուխգործոց, հենց այն պատճառով, որ նվիրված է «Կովկասի Լենինի»՝ Ստեփան Շահումյանի հիշատակին: Չեմ ուզում սխալ հասկացվել. Ես ոչ մեր մեծագույն քնարերգուի դեմ բան ունեմ, ոչ էլ՝ ընդհանրապես ներբողի ու ձոնի դեմ: Բանաստեղծական ժանրեր են ի վերջո, որոնցով հանճարեղ գործեր են ստեղծվել: Հիշենք թեկուզ պարսից միջնադարյան պոեզիան: Ավելի ետ գնալով, հասնենք անտիկ ժամանակներ ու հիշենք Հորացիոսի «Ես հուշարձան կանգնեցրի» ներբողը, որի հանճարեղ նմանակումն է արել Պուշկինն իր համանուն բանաստեղծությամբ, որ հիրավի գլուխգործոց է: Ես ոչինչ չունեմ նաև Շահումյանի դեմ, ով մեր ժողովրդի պայծառ զավակներից է, և ես չեմ հասկանում մեր նորաթուխ այն «գրագետներին», ովքեր լեզու են հանում սեփական ժողովրդի ավելի քան մեկդարյա պատմության վրա՝ առանց խտրականության թացն ու չորը խառնելով իրար: Բայց, սա ուրիշ խոսակցության նյութ է:

Ես, որ մեր դպրոցի «բանաստեղծն» էի (կարողանում էի օրվան պատշաճող ոտանավորներ սարքել), բանաստեղծությունը համարում էի «պարապ վախտի խաղալիք»-ի պես մի բան: Այսպես, մինչև այն օրը, երբ ստացա իմ գրական առաջին լուրջ դասը: Այդ դասը ես ստացա ոչ թե դպրոցական նստարանին՝ գրիչը ձեռքիս ճմլկոտելով հորանջելիս, այլ Քաջարանի (Ողջիի) մշակույթի պալատի դահլիճում: Եվ իմ ուսուցիչները եղան Բաբկեն Ներսիսյանը, Ժան Էլոյանը և Միհր Մկրտչյանը: Դա հանրապետությունով մեկ նշվող Սայաթ-Նովայի 250-ամյակին նվիրված գրական-երաժշտական մի երեկո էր, որի ընթացքում ասմունքի վարպետները Սայաթ-Նովայի տաղերից բացի ներկայացրին նաև ինձ բոլորովին անծանոթ Պարույր Սևակի բանաստեղծությունները: Այդ երեկոն ինձ համար ճակատագրական եղավ: Տուն եկա բոլորովին ուրիշ մարդ դարձած: Առաջին հարցը, որ ներսից քրքրում էր ինձ, այն էր, թե ինչպես մինչ այդ չէի հասկացել, որ բանաստեղծական չափված-ձևված տողերով կարելի է ասել բաներ, որ տակնուվրա կանեն մարդու ներաշխարհը:

Սկսվեցին Սևակի գործերի իմ տենդագին որոնումները: Կարճ ժամանակ անց, համադասարանցի Յուզիկ Համբարձումյանի աջակցությամբ Քաջարանի և շրջակա գյուղերի գրադարաններից թռցրի նրա՝ մինչ այդ հրատարակած բոլոր գրքերը, բացի առաջին՝ «Անմահները հրամայում են» գրքույկից: Զարմանալի արագությամբ, գրեթե ծայրեհծայր անգիր սովորեցի 7 հազար տողանոց «Անլռելի զանգակատուն»-ը:

Առաջին հանդիպումը

1964-ի դեկտեմբերյան մի սառնաշունչ օր, դարձյալ նույն՝ Ողջիի մշակույթի պալատի դահլիճում հանդիպեցի մեծ բանաստեղծին: Չգիտեմ ինչու, ես նրան մարմնապես հաղթանդամ ու որոտաձայն էի պատկերացնում, ինչպես ասենք՝ Տորք-Անգեղին: Բայց հետո հասկացա, որ փոքրամարմին բանաստեղծը չնայած Անգեղ էր իրոք, բայց ոչ թե Տորքը, այլ մեր Անգեղ Հերակլեսն էր, որ եկել էր մեր գրականության «ավգյան ախոռները» մաքրելու: Չհասցրեց, ավաղ, չթողին, որ գործն ավարտին հասցներ:

Ես իմ սերնդակից բոլոր օժտված բանաստեղծների պես, նաև նրանց, որոնց ականջները գրական չարաճճիությունների համար «ոլորել էր» Պարույր Սևակը՝ ավագ եղբոր իրավունքով, շատ բանով եմ պարտական նրան: «Եղբայր» բառը պատահական չգործածեցի: Նա երբեք իրեն գրական «պապա» չի համարել: Չնայած նրան պարտական են նաև իր սերնդակիցները, այլև իրենից ավագ իր ժամանակակիցները, նաև մեր գրականագիտություն-գրաքննադատությունը՝ իր հին ու նոր դեմքերով: Պարտքի գիտակցության խնդիր կա պարզապես, ձեռքը սրտին՝ խոստովանության խնդիր: Այդպիսի խոստովանություն անելու համար, առնվազն Համո Սահյանի ազնվությունը պիտի ունենալ, ով Սևակի մահից հետո գրեց. «Մեր սերնդի բանաստեղծների մեջ ամենից կրտսերն էր նա, բայց ավագագույնն էր վաստակի ու հանճարի առումով»:

Չնայած քաջարանյան հանդիպումից բանաստեղծի ստացած «առավել քան զարհուրելի տպավորությանը» (ինչի մասին գրում էր ինձ ուղղված նամակներից մեկում Սևակը), զարմացած էր, որ աշխարհից կտրված այդ անկյունում կա մի պատանի, ով ոչ միայն կարդում, այլև անգիր գիտի իրեն: Այդ հանդիպմանը գրադարանից իմ թռցրած «Զանգակատան» վրա մարգարտաշար իր ձեռագրով դրոշմված ընծայագիրը դարձավ սեփական-նաշնորհման այն «վկայականը», որով նա «օրինականացրեց» իմ կատարած գողությունը: «Իմ շատ սիրելի Գագիկին, հավատալով, որ դառնալու է մեր ժողովրդի համար օգտակար մարդ»: Զանգակատան մի հատվածի իմ արտասանությունից ոգևորված, դահլիճի դեմ ճակատս համբուրեց, ասելով. Այ տղա, դու Ժան Էլոյանից լավ ես արտասանում: Մեր այս առաջին հանդիպմանը հաջորդեց նամակագրական կապի շրջանը, որ ձգվեց մինչև 1965 թ. մայիս, որից հետո ես արդեն Երևանում էի և ուզածս պահին կարող էի հանդիպել նրան: Այս արտոնությունը ինքն էր շնորհել ինձ՝ տալով իր հասցեն (Երևան – 3, Կասյան N3, բն. 21), հեռախոսահամարը (7 – 01 - 56) և պատվիրելով. Երբ Երևան գաս, հանդիպիր, իմ տան դուռը միշտ բաց է քեզ համար:

Նամակագրական կապի շրջան

Որ ես նամակներ եմ գրել Սևակին, նույնիսկ մեր տանը չեն իմացել: Նրանցում ես զուտ գրական-ճանաչողական հարցեր եմ շոշափել, նպատակ ունենալով առավել խորությամբ հասկանալ բանաստեղծի ստեղծագործությունները:

Զորօրինակ, այսպիսի հարցեր. Ի՞նչ է նշանակում «Սեզամ, բացվիր» արտահայտությունը (արաբական «Հազար ու մի գիշերներ»-ի «Ալի Բաբան և 40 ավազակները» հեքիաթը դեռ չէի կարդացել):

Ո՞վ է Սուլամիթան «Երգ երգոց» պոեմում (17-ամյա դպրոցականս որտեղի՞ց պիտի «Աստվածաշունչը», չեմ ասում՝ կարդացած, տեսած լիներ գոնե»:

Ի՞նչ իմաստով է գործածել «ճառագայթային ախտ» հասկացությունը...

Այսպիսի և այլևայլ հարցեր, որոնց սիրով է պատասխանում բազմազբաղ բանաստեղծը իր երեք նամակներում: Այդ պատասխանները սեփական ստեղծագործության հեղինակային մեկնաբանությունների հրաշալի օրինակներ են:

Սևակի նամակների մասին գիտեին հայրս, համադասարանցիներս և գրականության իմ ուսուցչուհին, որ սեփական աչքով էին տեսել դրանք: Դե իսկ նրանք, ովքեր մեր նամակագրական կապի մասին գիտեին լսելով, լուրջ չէին ընդունում փաստը, ոմանք նույնսկ հորինվածք էին համարում դա, հավանաբար մտածելով, թե համազգային փառքի գագաթը ելած բանաստեղծը էլ բանուգործ չունի՞՝ նա ո՞ւր, դպրոցակա՞ն ուր:

Այսպես գրեթե ամբողջ 20 տարի, մինչև 1984 թվականը, երբ «Գարուն» ամսագիրը, իր իսկ խնդրանքով, հունվարյան համարում, որ ամբողջությամբ նվիրված էր Սևակի 60-ամյա հոբելյանին, տպագրեց նաև ինձ հասցեագրված երեք նամակները:

Տպագրեց, բայց ինձ համար շատ ցավալի... կրճատումներով:

Մեր ամենահամարձակ, ամենասիրելի ամսագիրը համարձակություն չունեցավ տպագրելու «Աստվածաշնչի» սևակյան գնահատականը: Այնուամենայնիվ, այդ հրապարակումով փարատվեցին կասկածները նրանց, ովքեր հորինվածք էին համարում մեր նամակագրական կապը:

Սևակի նամակների ամբողջական տեքստերը ես հարկադրված տպագրեցի իմ «Անվերջ սկիզբ» և «Որպես լույս ու խիղճ» բանաստեղծական ժողովածուներում: Տպագրեցի անհրաժեշտ ծանոթագրություններով, բայց էլի չպրծա ասեկոսեներից: Գտնվեցին մարդիկ, ովքեր հիմք ընդունելով «Գարունի» 1984-ի հրապարակումը, հիմա էլ հորինվածք համարեցին վերը նշված գրքերում տպագրված նամակներից մեկում վերականգնված «Սուրբ գրքի» սևակյան գնահատականը, ստիպելով ինձ հրապարակել նամակների լուսապատճենները: //



Հունիսի 11-ից օգոստոսի 30-ը՝ վարժական հավաքներ

Հունիսի 11-ից օգոստոսի 30-ը Հայաստանում անցկացվելու են պահեստազորայինների վարժական հավաքներ: Համապատասխան որոշումն ընդունվել է կառավարության մայիսի 16-ի նիստում:

Վարժական հավաքներին ներգրավվելու է մինչև 5 151 քաղաքացի, որոնցից 4 647-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 134-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 370-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝ համազորային մոտոհրաձգային, կապի, հետախուզական, ինժեներական, հրթիռահրետանային մասնագիտություններով:

Վարժական հավաքներին նախատեսվում է ապահովել նաև 45 միավոր ճանապարհաշինարարական տեխնիկա: //

Հյուսիս-հարավ ճանապարհի Սիսիան-Քաջարան հատվածը նախատեսվում է կառուցել մինչև 2030 թվականը

Կառավարությունը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությանը:

Համապատասխան նախագիծը ներկայացրեց Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

«Այսպիսով, Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ ճանապարհահատվածը մասնատել ենք 3 հատվածների՝ հյուսիսային ենթահատված՝ 27,12 կմ, Բարգուշատի թունել՝ 8,65 կմ, հարավային ենթահատված 24,25 կմ: Ընդհանուր առմամբ, այս նախագիծը առկա 118 կմ ճանապարհը կկրճատի և կդարձնի 60 կմ Քաջարանից մինչև Սիսիան և առկա միջինում 50 կմ/ժ արագության հատվածը կդարձնի 100 կմ/ժ: Կստեղծվի հարմարավետ, անվտանգ և ամբողջովին այլ որակի ճանապարհ և ենթակառուցվածք՝ տնտեսական, տուրիստական և այլ առումներով: Ֆինանսավորման համար վարկային ընդհանուր միջոցները 373 միլիոն եվրո է, որից ՎՀԵԲ-ի հետ 236 միլիոն եվրոյի համար է նախատեսվում կնքել այդ համաձայնագիրը»,– ասաց Սանոսյանը:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2032 թվականի նոյեմբերը (շինարարության կանխատեսվող ավարտ՝ 2030թ. նոյեմբեր, թերությունների համար պատասխանատվության ժամկետի ավարտ՝ 2032 թվականի նոյեմբեր): //

Գեղանկարչական սիմպոզիում՝ նվիրված Ակսել Բակունցի 125-ամյակին

Մեծանուն արձակագիր Ակսել Բակունցի ծննդյան հոբելյանական 125-ամյակի առթիվ Հայաստանի նկարիչների միության Սյունիքի բաժանմունքի ղեկավար Արամ Մաշուրյանի և Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղ Ա.Բակունցի տուն–թանգարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է գեղանկարչական պլեներային սիմպոզիում:

Մայիսի 5–ից 9–ը հանրապետությունում ճանաչված նկարիչներ Արմեն Լոռենցը, Արա Հայթայանը, Սամվել Չիբուխչյանը, Հրաչյա Սաֆարյանը, Գոռ Աբրահամյանը, Լորիկ Մինասյանը, Արտաշես Աբրահամյանը ժամանել ու մասնակցել են միջոցառմանը: Նրանք Գորիսի տարածաշրջանի տարբեր հատվածներում, չնայած եղանակային անբարենպաստությանը, վրձնել են բազմաթիվ գեղանկարչական էտյուդներ, որոնք հոբելյանական միջոցառման ընթացքում կցուցադրվեն թանգարանում:

Ավելին՝ նրանցից յուրաքանչյուրը մեկ նկար կնվիրի թանգարանին՝ հարստացնելով ֆոնդային հավաքածուն:

Նախագծի իրականացումը հովանավորվել է Գորիսի «Միրհավ» և «Մինա» հյուրանոցների տնօրինության կողմից, որի համար հայտնում ենք խորին շնորհակալություն: //

«Գանձասարը» առաջնության ավարտից երկու տուր առաջ նվաճեց բարձրագույն խմբի ուղեգիր

Հայաստանի ֆուտբոլի առաջնության հերթական տուրը ինտրիգ էր պարունակում: Կապանի «Գանձասարը» հաղթելու դեպքում ժամկետից շուտ հաղթող էր ճանաչվում, ինչը հնարավորություն էր տալիս ժամկետից շուտ նվաճել Հայաստանի ֆուտբոլի առաջնության պրեմիեր լիգայի ուղեգիր: Մայիսի 9-ին կապանյան թիմն հյուրընկալեց Երևանի «ՆՈԱ-2» թիմին: Առաջին խաղակեսում հյուրերը չկարողացան լրջորեն սպառնալ դաշտի տերերի դարպասին: Իսկ «Գանձասարին» միայն 30-րդ րոպեին հաջողվեց գրավել հյուրերի դարպասը: Խառը իրավիճակում Դավիթ Մայիլյանին հաջողվեց դիպուկ հարված կատարել:

Երկրորդ խաղակեսն անցավ ավելի աշխույժ պայքարում, ավելի շատ վտանգավոր պահեր ունեցավ «Գանձասարը», բայց հյուրերի դարպասապահն առանձնացավ հուսալի խաղով:

Երբ հնչեց մրցավարի եզրափակիչ սուլոցը, խաղադաշտում և տրիբունաներում ցնծություն էր, շնորհավորանքներ և հրավառություն: Հաղթող թիմի մարզիչներին և ֆուտբոլիստներին շնորհավորեց հանդիպմանը ներկա Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

Երբ հույզերը փոքրիշատե հանդարտվեցին, իր տպավորությունները ներկայացնելու համար դիմեցինք թիմի գլխավոր մարզիչ Կարեն Բարսեղյանին. *«Այսօր շատ երջանիկ ենք, քանի որ հասանք մեր նպատակին: Քանզի ի սկզբանե նպատակ ունեինք բարձրագույն խմբի ուղեգիր նվաճել: Ծանր ուղի անցանք: Ուզում եմ շնորհակալություն հայտնել ակումբի ղեկավար կազմին, բոլորին, ովքեր թիմի այս հաջողության մեջ ներդրում ունեն, միշտ թիմի կողքին են եղել: Երախտագիտությունս թիմի ֆուտբոլիստներին, ովքեր միայն գիտեն, թե ինչի միջով են անցել, և արժանի են ամենաբարձր գնահատականի:*

Շնորհակալություն եմ հայտնում այն թիմերին, ովքեր մեզ պայքար թելադրեցին, եթե նրանք չլինեին, մենք այսքան ուժեղ չէինք լինի և այսքան համախմբված: Բոլորը, բոլորը լումա ունեն այս ընդհանուր հաղթանակի մեջ»:

«Սյունյաց երկիրը» սրտանց շնորհավորում է «Գանձասարի» մարզչական շտաբին, ֆուտբոլիստներին, երկրպագուներին՝ նշանակալի նվաճման համար և մաղթում նոր հաջողություններ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
10.05.2024

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՅՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 21.05.2024թ.: